

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԵՎ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՆՎՃԱՐ ԿՐԹԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կնքման վայրը «_____» _____ 20 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի, պարտադիր հիմնական ընդհանուր եւ անվճար միջնակարգ կրթություն ապահովելու նպատակով կնքվում է սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**):

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ (հանրակրթական դպրոցը, այսուհետ՝ **Դպրոց**)

_____ դպրոցի լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի
_____ վկայական N _____

լիցենզիա N _____, գրանցման N _____-ի,
_____ տրված _____ գրանցված

ի դեմս տնօրեն՝ (այսուհետ՝ **Տնօրեն**) _____ -ի,

անունը _____ հայրանունը _____ ազգանունը,

որպես գործադիր մարմնի Դպրոցի կանոնադրության (այսուհետ՝ **Կանոնադրություն**) համաձայն,

եւ _____-ի Սովորող _____ -ի

_____ դասարանը _____ անունը _____ հայրանունը _____ ազգանունը
օրինական ներկայացուցիչ՝ _____ (այսուհետ՝ **Օրինական ներկայացուցիչ**)
_____ ծնողները, որդեգրողը, խնամակալը, հոգաբարձուն, կամ ծնողների ներկայացուցիչը

անձնագիր՝ _____, _____, _____, _____ հասցեն _____

_____ -ը, որպես
_____ անունը _____ հայրանունը _____ ազգանունը

Սովորողի կրթության պատասխանատու (այսուհետ՝ **Կողմեր**), կնքեցին սույն Պայմանագիրը Սովորողի կրթական, դաստիարակչական գործընթացը կազմակերպելու համար:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Կրթական պետական ծրագիրը (*այսուհետ՝ Ծրագիր*) կառուցվում է հաջորդականության եւ շարունակականության սկզբունքով՝ տարրական, հիմնական, միջնակարգ աստիճանակարգերով: Ծրագիրը կարող է ներառել նաեւ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրեր:

2. Դպրոցն ըստ տեսակի համարվում է _____ դպրոց եւ իրականացնում է _____ դպրոցի(_____-րդ դասարանների) Ծրագիր:

4. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պարտավորվում են ի շահ Սովորողի՝ բարեխղճորեն եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց իրականացնել իրենց պարտականությունները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Կրթական գործընթացը կազմակերպվում է հանրակրթական պետական չափորոշչի (*այսուհետ՝ Չափորոշիչ*) եւ Դպրոցի տարեկան ուսումնական պլանի հիման վրա: Ուսումնական տարին բաղկացած է ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից եւ արձակուրդներից:

2. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացվում է.

1) Տնօրենի հրամանով՝ Օրինական ներկայացուցչի դիմումի եւ կնքված սույն Պայմանագրի հիման վրա: Օրինական ներկայացուցչի սահմանված կարգով Դպրոց է ներկայացնում համապատասխան փաստաթղթեր, որոնց հիման վրա լրացվում է պարտադիր գործածության երաշխավորված «Աշակերտի անձնական գործ» գրքույկը.

2) Դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրանում է սովյալ օրացուցային տարում: Արգելվում է՝ առաջին դասարան ընդունվողների գիտելիքների ստուգումը, ինչպես նաեւ ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը.

3) Սովորողին Դպրոցից այլ դպրոց տեղափոխելը կամ ազատելը կատարվում է կրթության պետական կառավարան լիազորված մարմնի (*այսուհետ՝ Նախարարություն*) հաստատած կարգով՝ Օրինական ներկայացուցչի դիմումի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

3. Ուսումնական շաբաթվա տեւողությունը՝ հնգօրյա կամ վեցօրյա որոշում է Դպրոցը օրենքով սահմանված կարգով :

4. Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է՝ _____ ուսուցման եղանակով:

խմբային կամ

անհատական

5. Ուսումնական խմբերը՝ դասարանները, կազմավորվում են՝ ըստ սովորողների տարիքի եւ նրանց կողմից ուսումնասիրվող Ծրագրի յուրացման արդյունքի: Նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն կարող են կազմավորվել նաեւ բազմահամակազմ դասարաններ միեւնույն կրթական մակարդակների՝ 1-ից 4-րդ, 5-ից 9-րդ, 10-ից 12-րդ դասարանների սովորողներից:

6. Դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձեւը դասն է: Դասի տեւողությունը սահմանվում է Չափորոշիչով՝ 45 րոպե՝ անկախ դասարանների աշակերտների թվից:

7. Առանձին առարկաների դասաժամերին Նախարարության կողմից սահմանված կարգով կամ դպրոցի արտաբյուջետային միջոցների հաշվին Դպրոցի խորհրդի որոշմամբ դասարանը կարող է բաժանվել խմբերի:

8. Խմբային ուսուցումը կարող է կազմակերպվել նաեւ ուսումնաարտադրական, փորձարարական բազաներում _____ եւ _____ մարզաառողջարարական _____ ճամբարներում՝ _____:

նշել

անվանումները

9. Նախարարության կողմից փորձաքննություն անցած եւ երաշխավորված դասագրքերը, ձեռնարկները գործածվում են Դպրոցի ընտրությամբ: Դասագրքերը Սովորողին տրամադրվում են

Նախարարության կողմից հաստատված ներդրումային գումարների (*վարձավճարներ*) չափով: Սահմանված կարգով մանկավարժական եւ ծնողական խորհուրդների որոշմամբ Դպրոցը կարող է սահմանել ներդրումային գումարների (*վարձավճարներ*) հավելավճարներ եւ կիրառել ներդրումային գումարների զեղչեր սոցիալապես անապահով սովորողների համար:

10. Տարրական, հիմնական եւ միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է Չափորոշչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում՝ գիտելիքների ստուգումների, ավարտական, պետական քննությունների տեսքով:

11. Ուսումնական տարվա ընթացքում օրենքով սահմանված չափը գերազանցող բացակայություններ ունեցող սովորողին քննությունների թուլատրելու կամ դասընթացը կրկնելու կարգը եւ դեպքերը սահմանվում են Նախարարության կողմից սահմանված կարգով:

12. Առանձին գործող ավագ դպրոցում, եթե սովորողը չի ապահովել հոսքային, խորացված ուսուցման, ինչպես նաեւ առանձին առարկաների ծրագրերի յուրացումը, ապա Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սովորողը կարող է տեղափոխվել այլ հոսք, ենթահոսք կամ այլ ուսումնական հաստատություն:

13. Մասնագիտացված հանրակրթական դպրոցում, ինչպես նաեւ այլընտրանքային ուսուցման համակարգում սովորողը կամ նրա Օրինական ներկայացուցիչը, եթե չի պահպանել պայմանագրային դրույթները, կամ սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները, ապա Դպրոցը կարող է միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով Օրինական ներկայացուցչին:

14. Հիմնական, ավագ եւ առանձին գործող ավագ դպրոցներում սովորողը հանրակրթական առարկաներից տարեկան անբավարար գնահատականներ ունենալու դեպքում սահմանված կարգով հանձնում է վերաքննություններ կամ սահմանված կարգով մնում է նույն դասարանում դասընթացը կրկնելու:

15. Հիմնական եւ ավագ դպրոցների շրջանավարտին տրվում է Ծրագրին համապատասխան մնուշի ավարտական փաստաթուղթ՝ սահմանված կարգով հաստատված:

16. Օրենքով եւ Կանոնադրությամբ սահմանված Դպրոցի ներքին կարգապահական կանոնները սահմանում են սովորողի իրավունքները եւ պարտականությունները, որոնց կատարումը պարտադիր է:

Սովորողները ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ:

17. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով եւ Կանոնադրությամբ սահմանված կարգով միջին եւ ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետեւյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

18. Կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր խախտում թույլ չի տվել եւ դրսեւորել է իրեն, որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ աշակերտի:

19. Մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի տույժ կիրառվելու դեպքում Դպրոցը կարող է՝

1) առաջարկել Օրինական ներկայացուցչին՝ սովորողին տեղափոխել այլ դպրոց.

2) դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ սովորողին սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու առաջարկով:

20. Սովորողի հետագա բացակայությունները կանխելու նպատակով Կողմերը պարտավոր են մեկ շաբաթվա ընթացքում միմյանց գրավոր տեղեկացնել ձեռնարկած քայլերի մասին :

21. Ուսումնական պարապմունքներին սովորողի չհաճախելու համար Օրինական ներկայացուցիչը կրում է պատասխանատվություն:

22. Տասնչորս տարեկան չդարձած սովորողի կողմից Դպրոցին պատճառած վնասի համար պատասխանատվություն կրում է Օրինական ներկայացուցիչը : Եթե սովորողը վնասը պատճառել է իր նկատմամբ հսկողություն իրականացնող մանկավարժի կամ Դպրոցի այլ աշխատողի

ներկայությամբ ապա պատասխանատվություն կրում է այդ անձը օրենսդրությամբ սահմանված կարգով :

23. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան Սովորողը ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն է կրում Դպրոցին պատճառած վնասի համար: Այն դեպքում, երբ Սովորողը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցի նրա Օրինական ներկայացուցիչը :

24. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան Սովորողի կողմից Դպրոցի մեկ այլ սովորողի կամ աշխատողի նկատմամբ դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, այլ քրեածին արարք կատարելու կամ խուլիգանական դրդումներով մանկավարժների պաշտոնական պարտականությունների կատարմանը բացառիկ ցինիզմով խոչընդոտելու համար ենթակա է պատասխանատվության օրենքով սահմանված կարգով :

25. Դպրոցին արգելվում է, առանց Օրինական ներկայացուցչի եւ Սովորողի համաձայնության, Սովորողին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ Ծրագրով :

26. Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն :
Կրոնական գործունեությունը և քարոզչությունը Դպրոցում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

27. _____
այլ լրացուցիչ դրույթներ

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով, ինչպես նաև Կանոնադրությամբ՝ ու սույն Պայմանագրով:

1. Տնօրենը պարտավոր է՝

1) Մինչև Պայմանագրի վավերացումը Օրինական ներկայացուցչին ծանոթացնել Կանոնադրությանը, իրականացվող հանրակրթական Ծրագրին, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ հաստատված լրացուցիչ վճարովի ուսումնական ծառայությունների ցանկին, դրանց մատուցման պայմաններին և անցկացման կարգին, ներքին կարգապահական կանոններին, կրթադաստիարակչական այլ պայմաններին:

2) Սովորողի առողջության պահպանման եւ ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու, վերականգնելու նպատակով տարին առնվազն մեկ անգամ անցկացնել բժշկական (*սյրոֆիլակտիկ*) հետազոտություն՝ Դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես հաճախել չկարողացող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող Սովորողի համար Նախարարության սահմանած կարգի համաձայն կազմակերպել տնային ուսուցում:

3) Դպրոցում կրթական գործընթացը կազմակերպել Ծրագրի եւ Չափորոշչի պահանջներին համապատասխան:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպել ու իրագործել ուսուցման, դաստիարակության, սովորողների անվտանգության գործընթացը՝ տարրական, հիմնական, միջնակարգ կրթության մակարդակներում եւ յուրաքանչյուր մակարդակը ավարտող Սովորողի համար ապահովել Չափորոշիչով սահմանված գիտելիքների, կարողությունների ընդհանրական որակական մակարդակը:

5) ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը բաշխել պետական բաղադրիչով սահմանված կամ Նախարարության կողմից երաշխավորված առարկաներին:

6) Օրինական ներկայացուցչի դիմումի եւ համապատասխան պայմանագրի կնքման դեպքում մատուցել լրացուցիչ վճարովի ուսումնադաստիարակչական եւ այլ ծառայություններ.

7) հարգանքով վերաբերվել Սովորողի իրավունքներին ու ազատություններին՝ միաժամանակ կարեւորելով քաղաքացիական գիտակցության, հանրակրթության բնագավառում ժողովրդավարական սկզբունքների եւ կրթության աշխարհիկ բնույթի ապահովումը եւ կիրարկումը.

8) ստեղծել Սովորողի առողջության, ֆիզիկական զարգացման ամրապնդման, հիգիենայի, սննդի, հանգստի, ֆիզիկական եւ հոգեւոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ՝

–

նշել դահլիճների, խմբերի կամ այլ օժանդակ պայմանների առկայությունը

9) ապահովել Սովորողի կյանքի անվտանգության պայմանները, միաժամանակ իրագործելով նրա շահերի դեմ ուղղված ոտնձգություններից պաշտպանելու իրավաչափ գործողություններ, ինչպես նաեւ

թմրեցնող նյութերից, պայթուցիկ պարագաներից, մուրացկանությունից, թափառաշրջիկությունից, եւ այլ բնույթի քրեածին, հանցավոր արարքներից հետ պահող, կանխարգելող միջոցառումներ.

10) ապահովել աշակերտական խորհրդի անդամների մասնակցությունը Դպրոցի կառավարմանը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով :

11) _____ :

այլ լրացուցիչ դրույթներ

3. Տնօրենն իրավունք ունի.

1) Ուսումնադաստիարակչական գործընթացն իրականացնելու _____ աշխատակարգով:

նշել՝ ցերեկային, երկարօրյա եւ (կամ)

գիշերօթիկ

2) Դպրոցում հոսքային ծրագրերի առարկաներից սահմանելու փոխադրական քննություններ 10-րդ եւ

11-րդ դասարաններում:

3) Ծրագրում, որպես անբաժանելի մաս, ներառելու՝

ա. ուսումնական հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

բ. մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

գ. Սովորողի համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը.

դ. Սովորողի առողջության պահպանման միջոցառումները.

ե. Սովորողի սննդի կազմակերպում.

զ. Սովորողի տրանսպորտային կազմակերպված փոխադրումները.

է. Սովորողի երկարօրյա ուսուցման եւ (կամ) գիշերակացի կազմակերպումը.

ը. Սովորողի ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպումը ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում.

թ.

_____ :

այլ լրացուցիչ դրույթներ

4.

_____ :

այլ լրացուցիչ դրույթներ

5. Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝

1) ընտանիքում Սովորողին դաստիարակել եւ ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) պաշտպանել Սովորողի իրավունքները, օրինական շահերը եւ առանց լիազորագրի հանդես գալ ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաեւ դատարանում.

3) ներկայացուցչի իրավունքները իրականացնելիս վնաս չպատճառել Սովորողի ֆիզիկական եւ հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը.

4) Սովորողի դաստիարակության եղանակները ընտրելիս բացառել քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը.

5) Սովորողի դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ընտանիքում լուծել փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով Սովորողի շահերից, օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ներկայացուցչական իրավունքները չիրականացնել Սովորողի շահերին հակառակ.

6) մշտապես հոգալ Սովորողի ֆիզիկական առողջության, հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ կրթական կարիքների բավարարման, հակումների եւ ընդունակությունների զարգացման համար.

7) հարգել Սովորողի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, մայրենի լեզվի, կրթության աշխարհիկ սկզբունքների, ժողովրդական ավանդույթների եւ սովորույթների նկատմամբ.

8) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների, հայրենիքի, հանդուր-ժողական վերաբերմունք այլ ժողովուրդների եւ մշակույթների, շրջակա միջավայրի նկատմամբ.

9) դաստիարակել հարգանք Դպրոցի, մանկավարժական եւ տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարող աշխատողների նկատմամբ.

10) հատուցել իր, ինչպես նաեւ Սովորողի կողմից Դպրոցին հասցված վնասը.

11) Սովորողին գերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ, թմրեցնող նյութեր, զենք, զինամթերք, թունավոր պայթուցիկ պարագաներ, առարկաներ օգտագործելուց, ինչպես նաեւ իրագործել մուրացկանությունից, թափառաշրջիկությունից, մոլխաաղերից եւ այլ բնույթի քրեածին, հանցավոր արարքներից հետ պահող գործողություններ.

12) Օրենքով սահմանված ժամկետներում Սովորողին բերել Դպրոց, կանխարգելել հաճախակի անհարգելի բացակայությունները.

13) _____:

այլ լրացուցիչ դրույթներ

5. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի.

1) Սովորողին դաստիարակելու նախապատվություն.

2) Սովորողի կարծիքը հաշվի առնելով՝ սահմանված կարգով ընտրելու կրթական հաստատությունը եւ ուսուցման ձեւերը, մինչեւ Սովորողի հիմնական ընդհանուր կրթություն ստանալը.

3) համագործակցելու Դպրոցի, մանկավարժական եւ դաստիարակչական աշխատանքներ կատարող աշխատողների հետ Սովորողի կրթությունը Ծրագրով իրականացնելու համար.

4) դիմելու համապատասխան մարմիններին Սովորողի ուսուցման եւ դաստիարակության հարցերով.

5) պաշտպանելու իր եւ Սովորողի օրինական շահերը համապատասխան ատյաններում.

6) մասնակցելու Դպրոցի կառավարման, ներքին գնահատման գործընթացներին.

7) Դպրոցի համար կատարելու ներդրումներ հետեւյալ նպատակով կամ ուղղություններով՝

—.

8) օգտվելու ՀՀ օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից.

9) _____

—:

այլ լրացուցիչ դրույթներ

6. Կողմերը՝ Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, եթե դրա հետեւանքով երեխայի

առողջությանն անգոյությունը պատճառվել է միջին ծանրության վնաս կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

7. Կողմերի կողմից Սովորողին խոստումներ տալը, խաբեության կամ այլ եղանակներով քրեաձին հանցանքի կատարմանը ներգրավելը, երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, խուլիզանության դրդելը, որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով, ինչպես նաև հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելը համարվում է ընտանիքի եւ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն, որը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով :

8.

այլ լրացուցիչ դրույթներ

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է, եթե՝
 - 1) Կողմերից մեկը, այդ մասին տասն օր առաջ տեղյակ է պահում մյուս Կողմին.
 - 2) Դպրոցը լուծարվել կամ վերակազմակերպվել է.
 - 3) Սովորողը տեղափոխվում է այլ ուսումնական հաստատություն.
 - 4) Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը դարձել է անհնար.
 - 5) Պայմանագրի ժամկետը ավարտվելու կամ Սովորողի կողմից տվյալ կրթական մակարդակը ավարտելու կապակցությամբ.
 - 6) Սովորողի նկատմամբ սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու դեպքում, եթե նա տեղափոխվում է այլ ուսումնական հաստատություն.
 - 7) Սովորողի նկատմամբ օրինական ուժի մեջ է մտել դատարանի դատավճիռը.
 - 8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում.

5. ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒՅԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից եւ գործում է _____ տարի ժամկետով:
2. Պայմանագրում կատարված փոփոխությունները կամ լրացումներն իրավական ուժ են ստանում, եթե դրանք կատարվել են գրավոր եւ ստորագրվել Կողմերի կողմից: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերը Սովորողի դաստիարակության, կյանքի անվտանգության ապահովման, ինչպես նաև Պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ վերազանցման համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Կողմերի տարաձայնությունները լուծվում են փախադարձ համաձայնությամբ կամ օրենսդրությամբ ու Կանոնադրությամբ նախատեսված կարգով :
2. Տասը տարին լրացած Սովորողի կարծիքը հաշվի չառնելու կամ նրա շահերին հակառակ գործողություններ իրականացնելիս Կողմերը առաջացած հարցը կամ վեճը լուծում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակներից, որոնք տրվում են Կողմերին:
- 2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագիրը կնքելիս 14-ից 18 տարեկան Սովորողի գրավոր համաձայնությունը եւ ներկայությունը պարտադիր է:
- 2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպվում է հինգ տարի:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Օրինական ներկայացուցիչ՝

Հանրակրթություն իրագործող՝

Անձնագիր՝ _____	Դպրոցի _____
անվանումը՝ _____	
անուն _____	_____

հայրանուն _____	_____

ազգանուն _____	տնօրեն _____

ստորագրություն _____	ստորագրություն _____

հասցե _____	հասցե _____

հեռախոս _____	հեռախոս _____

Սովորող՝ _____

ստորագրություն _____

ազգանուն, անուն, հայրանուն (լրացնում է 14-18 տարեկան Սովորողը) _____

Պայմանագիրը _____ լուծվել է _____ հետեւյալ _____ պատճառով՝ _____

_____ **Օրինական ներկայացուցիչ՝** _____

_____ **Դպրոցի տնօրեն՝** _____

Սովորող՝ _____

լրացնում է 14-18 տարեկան Սովորողը _____